

զի յետ տարւոյ միոյ գիւնեցին 'ի Գուռն եւ միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ առին հրովարտակ յԱրքայէ 1179, նորոգել զեկեղեցին Ս. Աստուածածնի եւ ինքեանք միայնակ տիրել այնմ: Ծանր թուեցան իրքն յաչս Յունաց, եւ կարի զայրացեալ ընդ այս Բարդէնիոս Պատրիարքին Յունաց, բողոք կալաւ առ Արքայ, եւ ամբաստան լեալ զբռնութենէ Լատինաց ասէ. 'ի պատճառս նորոգելոյ զՍ. Տեղիս, զհողս եւ զքարինս նոցին քակեալ փոխադրեն Լատինք յաշխարհն իւրեանց, եւ բռնադատեն զուխտաւորս Յունաց երթալ անդր եւ յանձն առնուլ զկաթուղի կրօնս նոցին. ապա աղերս արկեալ խնդրէ յանձնել 'ի ձեռս ազգին Յունաց զբովանդակ Ս. Տեղիս Երուսաղէմի, զնոյն յայտ առնէր եւ հանրագիրն Ս. Քաղաքին այլազգեաց: Յետ այնորիկ 'ի դատիլն Յունաց ընդ Լատինս յատենի Կայսեր, հարկ եղև 'ի քննութիւն ամեւ զարձանագրութիւնս Կայսերական գիւմանին, ուր դտան արձանագրեալ հրովարտակք առաջին թագաւորաց Սէլիմայ, Սիւլէյմանայ, Մուրատայ, Իսլրահիմայ եւ այլոց, տալ ըզՍ. Տեղիս 'ի ձեռս Յունաց. իրբեւ ոչ առին յանձն Լատինք զայտասիկ՝ կազմեցաւ ատեան նախարարաց, ուր սարս էր վճարել երկուց ազգաց զքատաստանս իւրեանց. Լատինք ոչ կարացին մատուցանել յատենի աստ զկարեւոր գրեանս իւրեանց, այլ միայն խոստացան բերել զայնս յետոյ. անցին 'ի վերայ ամիսք իրբեւ 6, Լատինք ոչ երեւեցան, եւ ոչ կարացին մատուցանել զխոստացեալ զըրեանս: Զի թէպէտեւ մատուցին Լատինք հուսկ ուրեմն զերկուս հրովարտակս գրեալ 'ի թուին 1000 եւ 1020, այլ Յոյնք յառաջ բերին զհակառակս նոցին առաւել զօրաւոր քան զնոսս, մանաւանդ 'ի միումն յայանի ծանուցանէր անլաւեր համարել զհրովարտակս Լատինաց, ուստի որոշեցաւ յանձնել զՍ. Տեղիս 'ի ձեռս Յունաց. գրեցաւ հրովարտակն 'ի թուին 1170, յորում երկար եւ բացայայտ բանիւք պարզաբանէ զսեփհական տեղիս Յունաց 'ի տաճարին Ս. Յարութեան. զեկեղեցիս Գեթսէմանի եւ Բեթղէհէմի տալ 'ի ձեռս Յունաց. զայս հրովարտակ ընթերցան առաջի Արքայի բառ առ բառ, եւ նորա հաւանեալ հրամայեաց գրել զմաքուրն, եւ ասպա ձեռովք իւ-